

# Երեւան



7

(178)  
Հունիս, 2021



## Կերպարակերտման չափումները Հայկազ Հակոբջանյանի «ՊԱՂՎԱԼԻ ՎԱՂՈՆ» վեպում

Իերոսի ընտրության հարցում հեղինակային չափումը արտահայտում է կերպարի այն հատկանիշները, որոնք բխում են նրա ժամանակից ու բարքերից, ազգային կյանքից ու կենսական միջավայրից. ահա և՛ «Մտահոգ է Պաղվալի Վաղոն. միտքը պատեպատ է զարկվում. ելք չկա, ճար չկա: Աչքերը արյուն առած կատաղի դիմադրում է Վանը, Սասունը մոնչում է վիրավոր գազանի նման, Սեբաստիան, Խարբերդը, Էրզրումը լուռ են մեջքները կտրած, հոգեվարք ապրող հուսահատ լեռնցիներ: Թուրքը հզոր թաթը սեղմել է Երկրի կոկորդին ու մեջքը ջարդել»:

Կերպարի ստեղծման գործում հեղինակային չափման տարրերից են արտաքին նկարագրությունից երեստարքից, գնալ դեպքի ներքին հոգևոր աշխարհի նկարագրություն: Այսպես Պաղվալի Վաղոն էլ ժամանակի ընթացքում գաղափարապես աճում է, իսկ նրա ու ընկերների ծրագիրը մեծանում, առնականանում է:

Անշուշտ, իրադարձությունն է կերպարին դարձնում հերոսական, իսկ կերպարն էլ, եթե նրա բնական հատկանիշների մեջ մտնում է սխրանքը, իր հերթին իրականությունը դարձնում է գեղարվեստական: Պահակագործի հրամանատար գնդապետ Անդրեյ Սմիրնովի կաշառելով Վաղոն կարողանում է Սև բերդի գինապահեստները մաքրագործել...

Կերպարաստեղծման մյուս չափումը ինքնաչափումն է, որը շատ հաճախ լրացնում է հեղինակային չափումը, թեև վերջինս կարող է երբեմն գերակա ու թելադրող լինել:

Վաղոյի կերպարի ինքնաչափումը վեպի էջերում դառնում է ընդգրկում. խոսումների շրջանի մեջ է առնում, վերլուծում ու գնահատում է քրոնոտոպային հարցեր՝ ժամանակի ու միջավայրի համապատկերում.

«Երկու վանք պակաս չինեիք, մի հատ էլ գինգործարան լինեք, տնաշեններ: Արհեստավորների կենտրոն Գյումրիում գինագործ վարպետների պակաս կունենայի՞ք: Տուլան կարող է, Գյումրին չի կարող: Մի բուռ Գյումրին հարյուր բանաստեղծ, հազար երաժիշտ, գիտնական ու նկարիչ ունի: Թուրքը քթերիս տակ գին-

ված խրախճանք է անում: Մենք, ապավինել ռուսին, անգեմ թրև ենք գալիս փողոցներում»:

Կերպարների ինքնաչափումը ևս կարելի է բաժանել տարրերի կերպարի անձնական կյանքը, նրա ներքին խոսքն ու մտածումները, ինքնաբերականները և այլն, որոնք քննվող վեպում հանդես են գալիս ոչ թե տրոհված, այլ միասնաբար: Պատեպատ զարկվող մտքերը գնացին հասան իրենց տուն: Տունը մտքից հանել է լրիվ: Տեսնես ի՞նչ է անում մայրը: Արդեն երկու տարի է՝ տնեցիք սովորել են իր հանկարծակի չքվելուն... Պաղվալի հեղինակությունը օրեցօր աճում է, ավելանում են հաճախորդները: Վաղոն պիտի վազի... Իրեն մեծ գործ պետք չէ, տունը պահեն ու մեկ էլ զենքի փող հասցնեն:

Վաղոյի կերպարի ինքնաչափման մեջ, անշուշտ, կարևոր է էպիկական-հուզական բաղադրիչը, հուզական պայթյունը, որը բանջարիացը ուտեին ախորժակով, Կախեթի Մուկուչի սև գինին խմեին կուռ-կուռ: Ու խավարի մեջ Մանուշը քներ գլուխն իր ուսին հակած: Գրողի ծոցը կորչեին գորանոցն էլ, կառնուլն էլ: Գա՛ր Մանուշը, գա՛ր: Ինչ խոսք, բնականոն կյանքի ու ներդաշն սիրո վայելքի երազանքը մի առանձին փայլ ու բանաստեղծական հնչեղություն են ստանում սահմանային վիճակում հայտնված հերոսի մտաշխարհում:

Պաղվալի Վաղոյի կերպարի ստեղծման կարևոր գործոն է միջավայրի չափումը:

Միջավայրի ներքին ամբողջականության մեջ չեն վերանում մեծ աշխարհի, արդիականի բաղադրիչները: Վեպում բավական ներգործում են դրանց ազդեցությունները. միջավայրն իր հերթին նկարագրականից աստիճանաբար վերածվում է գործող կերպարի ու ձեռք է բերում կերպարային հյուսիս գծեր: Հայ իրականության մեջ Վաղոյի անունն արդեն անցնում էր բերանից բերան՝ վերածվելով լեգենդի. Եվ քանի որ այդ գործողությունը /իմա՝ պա-

հեստները թալանելու-Ռ.Հ./ մեծագույն զգուշությամբ և ճշտապահությամբ կատարվեց մեկ ամսվա մեջ տասներեք անգամ, շատերը մասնակից դարձան դրան, շուտով ծայր առան զանազան վարկածներ...

-Կա-չկա, սա Վաղոյի ու Բիծայի ձեռքի գործն է,-փսփսում էին իրար ականջի: Քանի՞ գլխանի էին, որ բարձրաձայն ասեին իրենց կասկածների մասին:

Կերպարակերտման միջավայրի չափումը, որ երբեմն հանգեցնում է նաև հերոսի ինքնաչափման, արդեն իր բնում առասպելացվում է, լեգենդացվում հեղինակին թողնելով կերպարի հարդարման որոշակի աշխատանք:

Վեպի խոսում էջերում Պաղվալի առեղծվածը բացահայտվում է ազգանվեր ուժերի քաղաքական ծրագրերի ու նրանց գինավառության կազմակերպման գործի մասնակիցների հավաքագրության արտահայտված է Սև բերդի գինապահեստը մաքրագործելու գնացած և երեք օր ու գիշեր ստիպված այնտեղ գիշերած, մահն աչքն առած Վաղոյի խոհերում. «Գա՛ր Մանուշը, գա՛ր: Փռեք թաշկինակը, թխած բանջարիացը ուտեին ախորժակով, Կախեթի Մուկուչի սև գինին խմեին կուռ-կուռ: Ու խավարի մեջ Մանուշը քներ գլուխն իր ուսին հակած: Գրողի ծոցը կորչեին գորանոցն էլ, կառնուլն էլ: Գա՛ր Մանուշը, գա՛ր: Ինչ խոսք, բնականոն կյանքի ու ներդաշն սիրո վայելքի երազանքը մի առանձին փայլ ու բանաստեղծական հնչեղություն են ստանում սահմանային վիճակում հայտնված հերոսի մտաշխարհում:

Ընդհանրացնելով կերպարակերտման չափումները՝ նշենք, որ շատ հաճախ դրանք ներառում են մեկնելու, հետևաբար Պաղվալի Վաղոն ասելով՝ հասկանում ենք նաև մի ամբողջ ազգային-ազատագրական շարժման այլեպոյան հատված: Ուստի Պաղվալը դառնում է խորհրդանշան՝ ժողովրդի երևակայության մեջ ստանալով առեղծվածային միստիկ գծեր, որի գեղարվեստական կերպավորումն առ այսօր մնում է ոգեղեն իմաստության տանող ամենակարճ ճանապարհը:

Գրականության մեջ կերպարաստեղծման չափում է նաև հեղինակային չափման և ինքնաչափման զուգորդումը, որը մուծում է մի չափումը մյուսի մեջ, բխեցնում ու պայմանավորում է դրանք իրարով, հանգեցնում մեկը մյուսին: Ի հավելումն այս մտքի՝ ընդգծենք, որ կերպարաստեղծման բոլոր չափումները հաճախ կարող են համադրվել, որը և ի վերջո դառնում է կերպարի գեղարվեստականացում:

### Պաղվալի Վաղոյի վիպական միջավայրն ու հարակից հերոսները

Հ. Հակոբջանյան արձակագիրը նոր գծեր է ավելացնում իրական պատմական դեմքերին և վիպական գործողությունների թա-

Հ. Հակոբջանյանի «Պաղվալի Վաղոն» վեպի ազգային ձևային ճանաչողական ու գեղարվեստական հմայք են տալիս պատմական իրականության խորքի վերհանումն ու գծագրումը, որտեղ իրական անձը՝ Ավետիս Դարբյանը /Պաղվալի Վաղոն/ որպես կերպար, ներկայացվում է գեղարվեստական միջավայրի հետ ունեցած ընդհանրությամբ՝ ազգային-ազատագրական պայքարի ծրագիրն իրականացնող ընկերների հետ ընդհատակյա գործունեության շառավիղով:

Հեղինակը հայ արձակագրի գեղարվեստական փորձի յուրացմամբ ստեղծել է հայ տոհմիկ բնավորություն իր ժամանակի քաղաքական կյանքի ելվերումների, Ալեքսանդրապոլ-Գյումրու կենցաղի ու բարքերի, տարերքի ներքին շարժման նկարագրության համապատկերում:

### Ո՞վ էր Պաղվալի Վաղոն

Բնության առարկա վեպի նախախոսքում ակադեմիկոս Ս. Սարինյանը նշում է. «Այս խորհրդավոր քաղաքի /հիմա՝ Ալեքսանդրապոլի- Ռ.Հ./ նկուղներում է ահա, որ համապագոր սկիզբ է առնում փիլիսոփայական մի կյանք, իսկ Վաղոյի Պաղվալում, ոգելից վայելքի շղարշի հետևում գործում է հայ հեղափոխության ջիղը՝ ճշգրիտ նշարելով կացության դաժան ծանրությունն ու մաքառման վերջին սահմանը՝ «Երկու թշնամու...թուրք և ռուս բռնակալների» արանքում: Եվ այդպես էլ, հավատարիմ իր երդումին, վերուստ սահմանված ճակատագրով, Բասենի դաշտում գոհվում է Պաղվալի Վաղոն, հայոց մաքառման տարեգրության մեջ գրանցելով նահատակության մի գեղեցիկ դրվագ և Ամենափրկիչ եկեղեցում Մանուշի աղոթքներից հյուսելով խորտակված սիրո մի անզուգական լեգենդ»:

Հայոց ազգային-ազատագրական շարժման ոգեշնչող այս անհատականությանը՝ Պաղվալի Վաղոյին, անդրադարձել է նաև

Խ.Ղազենցը: Կարևոր ենք համարում ընդգծել, որ Հ.Հակոբջանյանը, «Պաղվալի Վաղոն» վեպում վկայաբերելով Խ. Ղազենցի «Ռանչարների կանչից» մի դրվագ, այն կշռադատված բանալի-նախամուտք է դարձրել համանուն կերպարի ներկայացման իր /հեղինակային/ մտահղացումը գեղարվեստորեն իրացնելու համար. «Այդտեղ թաղված էին լռեցի Սրայան և գյումրեցի Պաղվալի Վաղոն և դարձյալ մի հայդուկ՝ Մենակ անունով: Ռուսահայ երիտասարդի միակ ձգտումն էր, թե երբ պիտի անցնի սահմանը՝ իր հայ եղբայրներին ազատագրելու սուլթանի լծից: Ալեքսանդրապոլից Վաղոն և լռեցի Սրայա 1904թ. ընկերներով ճեղքել էին սահմանը և անցել Երկիր՝ միանալու Սասնո ապստամբներին, բայց ռուսաց թագավորի հրամանով սպանվել էին սահմանագլխին և ամփոփվել այդ քարակույտի տակ»:

Ասել է թե՛ Ղազենցը ազգային-ազատագրական շարժման ուխտավորի ընթացքը ոչ պատահականորեն սկսում է նահատակների ու Պաղվալի Վաղոյի գերեզմանների մոտով, ինչպես որ մեր էպոսի Դավիթը այցելելով՝ հոր գերեզմանին՝ տեսնում է կանաչ կարմիր լույսը՝ որպես կյանքի խորհուրդ:

### Պաղվալի Վաղոյի վիպական կերպարի ստեղծման չափումները

Վիպական կերպարի ստեղծման չափումները մշտապես եղել են գրականագիտության ու շաղկապի ծիրում՝ անշուշտ, կարևորելով կերպարակերտման հնարների կամ միջոցների ընտրությունը:

Ընդունված է գեղարվեստական կերպարի ստեղծման հիմնական տարրերից առանցքային համարել անհատ պատմողի հեղինակային չափումը, որը կարող է տարողունակ լինել՝ ներառելով այլոց մոտեցումներն ու գնահատականները:

Հ. Հակոբջանյանի վեպում

փի մեջ գեղարվեստական բնորոշումներով թանձրացնում է նրանց կերպարը: Վիպական միջավայրն ու գլխավոր հերոսի նկարագիրը, նրա գործունեությունն ամբողջանում, լիարյուն են դառնում հարակից կերպարներով՝ գաղափարակից ընկերներով, որոնք ևս ազգային-ազատագրական պայքարի նվիրյալներ են: Ամեն դեպքում ուշադրության է արժանի ոչ միայն առանցքային կերպարը՝ որպես դիպաշարի ու կոմպոզիցիայի էպիկենտրոն, այլև գլխավոր հերոսի հարազատ միջավայրի մարդիկ՝ նրա զինակից ընկերները՝ Բիժան՝ Սվազցի Դարությունը, Կարսից եկած Ռուբենը՝ Սինաս Տեր-Սինասյանը, Դանո Ջանփոլադյանը, Լիկոլ Դունանը, Լոռեցի Սրապը, Դակոբ Զիլինգարյանը /Երկաթը/ և այլք, որոնք պատմական դեմքեր են: Ժամանակը նրանցից հայդուկ լինել էր պահանջում:

Կերպարի ստեղծման միջավայրային չափման վառ արտա-

հայտություն է նաև հերոսին տված մակնունը, քանի որ այն դառնում է գրական կերպարին ներսից կամ խորքից տրված գնահատական, ինչպես հեղինակն է վերաբերվում բնութագրում: Անխիղճ է գյուղերեցին, ու կատակն էլ դաղե, կանցնի, դրած անունն էլ մինչև մահ-գերեզման վրայից չես կարող քերել:

«Շաբաթից ավել է՝ կորել է Սվազցի Դարությունը, որին գյուղերեցիք, սովորության համաձայն, առանց մակնունքի չթողեցին Բիժան կնքեցին: Բարձր հասակով, թավ բեղերով, դեռ երեսուն տարին չբոլորած երիտասարդին Բիժան անունը այնպես սազեց, կասես կոտրած աթոռի ոտքը թութխալով կպցրին»:

Եվ այսպես՝ դրվագ առ դրվագ պատկերվում է Գյուլնրին իր մարդկանցով, կենցաղավարությամբ, ավանդական բարքերով ու նիստուկացով, քեֆչի լոթիների տրամադրությամբ, արհեստավորներով ու նրանց սովորույթ-

ներով, սրճարաններում հնչող աշուղական արվեստով, կենսական հունորով... Գյուլնրին կատակում էր. փողոցում, գինետներում, հարսանիքներում առանձնանում, համուհոտ էին տալիս Պոլոզ Մուկուչն ու Ծիտրո Ալեքը, Զիգ-ձիգ Կարոն ու Ղուտուղ Արամը, Իզբիտով Արշալույսն ու Նալըն Կարոն:

Ինչ խոսք, Վաղոյի կերպարը գեղարվեստական առումով ամբողջական չէր լինի, եթե վեպի էջերում չգծագրվեր սիրած աղջկա՝ Մանուշի հուզիչ կերպարը: Դեպքերի զարգացման ընթացքում շիկանում են Վաղոյի խոհերն ու հույզերը. նրա հոգին անսահման աշխարհ է, անվերջ գեղեցկությունների ու նրբավորումների մի աշխարհ, բայց և սևեռուն գաղափարի՝ երկրին զինելու գերակայությամբ. «Ի՞նչ ասեր Վաղոն, ինչո՞ւ պղտորեր աղջկա անտեղյակ հոգին, ասեր, թե Բիժայի նման ինքն էլ մատղցու է, թե այդ ճանապարհն ընկնողները իրավունք չունին ուրիշի

մեղք ու արունքի տակ մտնելու... Էնթա՛ն բան կա պատմելու, Մանուշ, բայց արժե՛՛ հոգիդ պղտորել»:


Այսպիսով՝ քննվող վեպի պատմական դեմքերը ազգային արժանապատվություն ունեցող հայի կերպարներ են, իսկական որոտման որդիներ՝ անվաճ երազի կարոտով: Նրանք կյանքից են գալիս, ունեն իրական բնորոշներ, և խիզախումը, սխրանքն ու անձնվիրումը նրանց կենսունակ ջղերն են, որոնք էլ ձևավորում են անհատի հայեցակարգը գրական երկում:

Եպիկական ժամանակով ու վիպական մթնոլորտի ընդհանուր գծագրմամբ «Պաղվալի Վաղոն» հեռու է մեծակտավ գործ համարվելուց. հեղինակը գնում է դեպի բնաշխարհի ու մարդիկ, հրաժարվելով ծավալից՝ թափանցում է իր հերոսների խորքը, բացահայտում նրանց գործողությունների ու վարքագծի շարժառիթները:

Տարակույս չկա, որ իրա-

կան կերպարը վիպականանում է, երբ ոգեղեն բաղադրիչը նրա մեջ արտահայտված է հզոր լիցքերով ու ներգործուն ազդակներով: Պաղվալի Վաղոյի կերպարի գեղարվեստական անդրադարձը հետահայաց խոկում է մեր ազգային բախտի ու ճակատագրի՝ այսօր էլ դեռ չլուծված հարցերին: Ամեն դեպքում այդ հարցադրումներն արդիական են ու միտված ապագայի հեռապատկերին: Վիպական սյուժեի մեջ դրվել են եղելություններ ու գործողություններ, և պատմական ոչ շատ հեռու անցյալի խնդիրները Վաղոյի շուրթերով նորոգյալ հնչեղություն են ստացել. «Հրացանի պաշտամունք պիտի ունենայինք: Փամփուշտի ու վառոդի պաշտամունք: Վառոդի հոտ պիտի առներ նորածին ամեն հայ մանուկ: Ամեն հայ օջախի պատի սրբապատկերի տեղ հրացան էր պետք կախել»:

Ռոզա ԳՈՎԳԱՆՆԻՍՅԱՆ



**Ալեքսանդր Մորավիա**

**Եվրոպա**

Քո կյանքում տեսա լիքը նախագծեր, Որ երազներ են Ու երազներ, որ նախագծեր չեն Մարդկանց, որ մտնում են այնտեղ Ու այնտեղից դուրս են գալիս, Ինչպես որ մտնում ու դուրս են գալիս Մի դատարկ ու դռներ չունեցող տնից Քո կյանքում, մտո՞ք տկար Եվրոպա, Ես տեսա, որ անվերջ իրարանցում է ու զահավիժում առ ոչնչություն:

**Ճամփորդություն Մոնղոլիայում**

Գնացի Մոնղոլիա քանզի ռուբլիներ ունեի Մոսկվայի մի դրամատան մեջ, և ունեի ռուբլիներ, քանզի 17 տարեկանում մի առավոտ սկսեցի գրել Անտարբերները Բուլցանոյի մի հյուրանոցում: Այդպիսով, զառը, որ նետվել էր կես դար առաջ, գլորվեց ու գնաց-հասավ մինչև Կարմիր Դերոս, Այսինքն՝ Ուլան Բատոր: Ամեն ինչ լինում է պատահմամբ Ու նաև պատահմունքն է լինում պատահմամբ. ձեզ պիտի խնդրեն, որ

չկարծեք՝ ես ինչ-որ ինտելեկտուալ եմ կամ master penser (մտքերի տիրակալ) ով հասնում է մինչև Մոնղոլիա տեսնելու համար, թե համայնավարությունն այնտեղ է ավելի լավ, թե ավելի վատ, քան թե մի այլ տեղ: Պարզապես մեկն եմ, ով Մոսկվայի մի դրամատան մեջ ռուբլիներ ուներ ու չգիտեր՝ ոնց դրանք ծախսեր:

**Քենեդին և ծովի ալիքները**

Մի ֆիլմում տեսա Քենեդիին մեքենայից իջնելիս, հետո մոտենալիս մարդկանց մի խմբի: Արդ, ֆիլմը նայեցի նորից ու նորից, ու տեսնում էի նրան միշտ իջնելով ու մոտենալով, ու ամեն անգամ Քենեդին դառնում էր ավելի անհեթեթ ու ավելի ծիծաղելի, խամաճիկ, ավտոմատ տիկնիկ՝ առանց թելերի մեռած կենդանի, զոմբի, քայլող դիակ: Հիմա նայում եմ ծովին պատուհանի ապակու միջից, Օրը քամոտ է, նույնական ալիքները հաջորդում են իրար. Գալիս են մեռնելու իրար հետևից՝ ափի վրա միշտ նույնը ու միշտ իրարից տարբեր: Նայում եմ դրանց ժամերով, ու մտքովս չի էլ անցնում, որ դրանց անվերջ հերթագայությունը համարեմ անհեթեթ կամ ծիծաղելի: Կրկնվում են, ինչպես Քենեդիի պատկերը, Սակայն տափակ առօրյա հիշեցնելու տեղ Մտածել են տալիս հավերժի մասին:

Բնությունը մարդկանց նման չէ բարեբախտաբար, Լավ է անում այն, ինչ անում է:

**Անմահներ**

Գրքերն անհամար են... Այլոց գրքերին իմ գրքերն են ավելանում: Հիմա իմ և այլոց

գրքերը խաղաղ մնջում են փոշու շերտի տակ և անմահության իրենց հավակնությունները հիշեցնում ինձ, որ կյանքն անմահ չէ: Օ՛, ո՛չ, այլ երկար է ու խիստ ծանծրալի՝ հաստատ այդպես է:

**Մղձավանջ**

Փակեցի դուռը բանալիով Անձուկ միջանցքներով երկար փախուստ տալուց հետո, Հասապառ, ուսերով հենվեցի դռանը ու նայեցի շուրջս. Մի խորանարդի ներսում էի՝ պայծառ լուսավորված, Չորս պատերը, առաստաղն ու հատակն էլ միասին լինում էին վեց: Կահույք չկար, ոչինչ չկար, Բացի մի անկյունում ներքնակից, Որից փախել էի՝ Կարծելով, թե փակել էի դրսից:

Հանկարծ հասկացա, որ այլևս դուրս պրծնել չեմ կարողանա. Փակված էի մի խորանարդում Մղձավանջի հետ:

**Ժամանակավոր հարություն**

Կլոր ու հարթ քարերի կույտեր որպես նախապատմական սողունների ձվեր ցար ու ցին ընկած էին, Վիկտորիա լիճը՝ գորշ կաթնագույն կուրացուցիչ, Արտացույցում էր ամպրոպային մուր երկինքը. Սավառնում էինք անձրևի դեմ շերտավոր ամպերի միջով, որոնք անցնում էին փութով հարձակվող զորագնդերի նման: Ինքնաթիռն իջավ

թռչչուղու վրա մեծ արագությամբ, Չկարողացավ վայրէջք կատարել, նորից վեր ելավ Ուղղություն վերցրեց դեպի բլուրը: Մտածեցի՝ մահս մոտ է, ու հասկացա, որ ժամանակ չկա անելու ինչ-որ բան,

Ոչ անգամ կյանքը ողբալու:

Տարուերվելով ու ցնցվելով՝ ինքնաթիռը բլրի տակ անցավ. ծառերը խոշոր էին կաղամբի նման, իսկ կովերը թվում էին շներ: Հետո նորից վեր ելավ, պտույտ տվեց ու դանդաղադրեց դաշտի մեջ իջավ: Անձրևում էր կատաղորեն ելա դուրս անձրևի թարմացնող շնչին, երկու ոտքով ցատկեցի մաքուր ջրափոսի մեջ. Բոլոր զգայություններս բաց էին թափվող անձրևին, Կյանքը, որ կախվել էր մի պահ վերսկսել էր իր ընթացքը խառնափնթոր, վերջին պահին մահից խույս տված մեղլիկ անցումով: Մնացի անշարժ դեմքս ցնցուղող անձրևի ներքո՝ նայելով շուրջս:

Աֆրիկյան հավերժական ներկա էր ու անտարբեր հարությանը իմ նախնական: Հետևում բառբառը հուսահատ ու անկարող ժեստեր էր անում: Օղակայանը պստիկ էր՝ Տնակով իր խեղճուկրակ: Սկսեցի մի ջրափոսից մյուսը ցատկել Տաբատս չթրջելու համար: Կյանքն իմն հեռանում էր մահից ավելի ու ավելի, Դուսում հանդարտ ու արդեն ծանծրալի: Մտածում էի այդ հրաշք անձրևի մասին, Այն մասին, թե գուցե պետք է մահվան վախ ապրել ամեն օր գոնե մեկ անգամ...

\*\*\*

Ու մեկ էլ՝ կյանքս նմանվեց մեռած ճարուղի, Որ կալե-մնացել է այն ճյուղին, Որի վրա ամառները Օրեր շարունակ երգեց հևասպառ: Աշնանային քամին շուտով կարկի նրան ճյուղից ու կթռցնի հեռու խշխշան տերևների ու Սոսիների չոր կոնների հետ: Խնդրում եմ ձեզ՝

այդ թաղանթը գետնից վերցրեք, Բնության թանգարանում դրեք՝ ապակե մի պատյանի մեջ ու պիտակի վրա գրեք. «Ժամանակին այն բացառիկ ճարուղ էր իր երգերով հայտնի»: Մանուկները կանգ կառնեն նայելու Մեռած ու չոր միջատին Ու կասեն. «Ճարուղներ աշխարհում կան. ինչքան ուզեք, Հատկապես այս մեկը պահպանել համուն ինչի՞»:

**Արդարացի չէ**

Մի առավոտ Վան Գոգը նկարեց խեթաճանցի պարտիզայանին Հետնապատառնին պարտեզի. Չսափրված, կարմիր ականջներով ու բաճկոնով գոլավոր Ու չկոճկած օձիքով, առանց փոխկապի: Գոհ ժպտում էր իր աճեցրած ծաղիկների միջից:

Մինչ նկարում էիր նրան, գուցե արդեն գիտեիր, Որ քիչ օրեր անց պիտի մեռնեիր: Հիմա նկարդ արժե միլիարդ ու կես Ու կախված է վառարանի վերևում՝ Դիմացը այն սեղանի, ուր նստել են և ուտում են Այլ հրավիրյալների հետ: Արդարացի չէ, Վան Գոգ, որ դու եղար ինքնասպան, որ նկարդ արժե միլիարդ ու կես, որ ես, մտած սեղանի մոտ, այն դիտում եմ բերանս լի al gratia մակարոնով:



Նկարը՝ Վինսենտ Վան Գոգի. «Պարտիզայանը»

Իտալերենից թարգմանեց Գառնիկ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ



ԱՍՏՂԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այնտեղ, ուր ծնվեցինք միայն վերջին դերը խաղալու գիտակցմամբ, չապրեցինք երբևէ... Ես բաժանվեցի մեկ քառորդի, դուրս մետեցի ինձնից մեկին, որ մերսիս երրորդությունը միշտ փնտրի ու ձգտի նրան: Եվ գիտե՞ք՝ ես մի անգամ գտա ինձ, երբ այդ երրորդությունն իր արանքում կորցրեց բոլոր պատվիրաններն ու գոռաց. «Այսօր կիրակի է, հանգստացիր»: Մենք սկսեցինք մեզ մեզնից դուրս փնտրել, երբ ծնվեցինք վերջացած

ու գտանք մեզ միայն մի անգամ և հավերժ, բայց չհասանք երբեք: Այնտեղ, ուր մենք սկսեցինք սերը դարձնել թղթոտ իմաստություն ու այսքան շատ խոսել դրա մասին, Մերն ու մենք դարձանք չափելի հայացքով, տարիքով, տանիքով, ժառանգով... Մինչդեռ դրսում, չնայած ամեն ինչին, հողը պարզապես սիրեց բարդու անպտղությունը... Եվ այնտեղ, ուր մենք սովորեցինք լռել ատելության մասին, փքվեցին բոլոր զգացողություններն ու խոստացան չպայթել, այլ ճգնել ու ցավեցնել մեզ... Մենք դարձանք բոլոր կործանումների պատճառը, երբ սովորեցրինք ատելությանն այսքան հմտորեն լռել: Եվ այնտեղ, ուր գրագ եկանք բոլորի հետ, որ կհասնենք մեզ ամենաբարձր կետում, մնացինք արանքում մեր ու այնտեղի, ուր սովորեցրին զգալ ամենը ու վերջանալ սկզբում:

\*\*\*

Երդվում եմ իմ գրեթե լայն անմեղ մոլորումներով՝ ինձ բաժին հասած հեքիաթներից ամենասիրունն ես,

շուտ մթնող օրվա վերջին դեղինով ներկվում եմ ու քամուն կիտրոնի սպասումն ու... թեյում: Դերքվում եմ ուշ լուսացող օրվա հիմար երագում, շնչում սենյակի դառնահամն ու... սրճում: Դետո տաք, երկար վերարկու, մի քիչ մոդայիկ գլխարկ, ու ես ֆրանսիական ոճով լսում եմ բարձրակրունկների ու մայթերի կռիվը. հաղթում եմ մայթերը, և գնում եմ ես աշխատանքի, մրմռում եմ բարձրակրունկներս:

Օրվա դանդաղ ընթացքը հրում է լրահոսը, հոսում ես մտքումս անլուր խաղերով: գոյը, բաժանված օրերի, սառը սպիտակով եղանակվում է, ներկում է փողոցներն ու համոզում, որ սպիտակը միայն «եղեն»-ի մեջ չէ, ու համոզվում, որ սպիտակը երկար կյանք չունի... Բարձրակրունկներս կոտրվում եմ սահող սպիտակի արդարությունից. ես պաշտում եմ քեզ իմ բոլոր մեղքերից շատ ու բոլոր սիրելիներից քիչ...

Հոսում ես մտքումս անլուր խաղերով, ու ստիպված քեզ պոետն է բերում, իսկ գրողը՝ տամուս...

լռում է ամեն ինչն ու «ամեն ինչն» ի՞նչ է՝ լռեցնելու աղմուկն աչքերիս ու սաստելու սպասումը քամված:

Ներկվում եմ, հերքվում եմ, բաբախում օրվա բնականոն շիթմով: Նախապես հաշտվում եմ վաղվա հետ ու պատմում երագանքը, որ սկզբում էր:

\*\*\*

Ինչ-որ մեկի երագն էի, ով պատմեց ինձ ջրին, ու ես այդպես էլ չիրականացա:

Ինչ-որ մեկի թափած աղն էի. խաչ քաշեցին, բայց, մեկ է, դարձա կռվ-աղ-խնձոր:

Ինչ-որ մեկի կարմիր թելն էի՝ չկտրվող, երագանքը մոտս պահած:

Կոտրած բաժակն էի ինչ-որ մեկի ու ինչ-որ մեկի մարած չարն էի. սինն էի, մի՛ֆն էի:

Ինչ-որ մեկի վառած մոմն էի, ու կրակե գոյությունս հրդեհել էր ուզում անգամ:

Ես, 40 օրականը չլրացած, ինքնասպանն էի, ու որպեսզի էլի ապրեմ, ինչ-որ մեկն ինձ աչքով տվեց:

Այլընտրանքներն այլաճանակվում են բաց ուղիների գիտակցության մեջ...

Ուղիները շատ են, բայց փակուղին, որ քեզնով է փակվում, ամենասիրունն է:

Քարտեզները, որ շեղ, ուղիղ, խաչվող, զուգահեռվող, բաց կան փակ ուղիներ են նկարում, ամենանահավատ նկարչի ամենաթանկ ստեղծագործությունն են, որ այնքան հասարակ է դառնում քո հայացքի լաբիրինթոսում:

Ամենահեշտը մտքերը վաղվան ծախելն է՝ երկու ժամ քնելու ակնկալիքով, բայց վաղը էլ խաբում է ժամի մեջ, ու անքնությունն օրենք է դառնում, ու էդ խաբկանքն ամենասիրունն է:

Մենք պատրաստ ենք մի քանի շաղկապով ժխտելու բոլորին, բոլորիս, բոլորիդ, բայց, միևնույնն է, փակուղին, որ քեզնով է փակվում, ամենասիրունն է...

ԱՄՄԱՈՐ ԳՐԱԳՎՈՐԱՐՆՈՒՄ

Շիրակի մարզային գրադարանի ընթերցարանը օրերս վերածվել էր «Իրական հեքիաթի»: Մարզի Շիրակական գյուղի միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանի աշակերտները մանկավարժ Վարդիթեր Գևորգյանի ուղեկցությամբ եկել էին գրադարան գրքի քննարկման: «Իրական հեքիաթի» գրքի հեղինակ, ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի անդամ Արմենուհի Մխիթարյանը գրադարանում հանդիպեց աշակերտների հետ, հաղորդակցվեց նրանց հետ՝ գրքում բարձրացված այն կարևոր հարցերի շուրջ, որ հուզել և հետաքրքրում էին նրանց: Աշակերտները հաճույքով էին ընթերցել գիրքը, տպավորվել գրական հերոսուհու կերպարով: Քննարկումն անցավ շատ ջերմ, տպավորիչ և անմիջական մթնոլորտում: Աշակերտների և գրքի հերոսների միջև անցկացվեցին համեմատական վերլուծություններ: Պարզվեց, որ նրանց ընտանիքները նույնպես բազմամարդ են և սեղան նստելուց առաջ միշտ «բացում են սեղանի և՛ աչքերը, և՛ ականջները»:

Հեղինակն ավփոփիչ խոսքում անկեղծացավ՝ նշելով՝ գիրքը գրելիս ինչ ապրումներ ու հույզեր որ փոխանցել են յուրաքանչյուր տողին՝ կրկնապատկած ջերմությամբ այսօր իրեն վերադարձան: Նա միջոցառման ավարտին իր գրքերից մվիրեց Շիրակական գյուղի միջնակարգ դպրոցի գրադարանին և խոստացավ, որ նման հանդիպումները կլինեն հաճախակի:



ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԽԻԹ-ԱՐՅԱՆ

-Այ կնիկ, ճիշտն ըսա, դո՞ւ ես կերել...

-Քա՛ մարդ, խելա՞ր, էդ ի՞նչ կըսես...

-Կնիկ, խոստովանվի՛ր, դու ես վիշնյա կուղես...

Կինը մտքում արագ-արագ մի երկու տող «Հայր մեր»-ից հիշեց՝ ինքնապաշտպանության նախապատրաստական փուլի մեջ էր, և քանի որ այլ ճար չուներ էդ ժխտ գժից հոգին ազատելու, պնդեց իր սուտը, որն ականայից թռել էր լեզվի ծայրից, որպես առաջին դիմադրություն խստորեն հնչեցրած մեղադրանքի:

-Գրի՛շ, ես վիշնյա չեմ ուղե, երդվի՛մքը, էս խաչը վկա, ամուսնու աչքերի մեջ նայելով՝ լայն խաչակնքեց Սիրանը, իսկ մտքում չբավարարվելով ինքնապաշտպանության նախապատրաստականով, եզրափակեց. «Մեղա՛յ... մեղա՛յ... Տե՛ր»:

Այս երկխոսությունը, ավելի ճիշտ մեղադրանքը, սկսվել ու կրկնվում էր ամեն օր. «Այ կնիկ,

ՈՒՇԱՅԱԾ ԶԱՐԹՈՆՔ

Ճիշտն ըսա, քա՛ մարդ, էդ ի՞նչ կսես...»:

...Այդ տարվա գարունը նազուտուգ չարեց, գիժ չխաղաց, չթողեց մարդկանց աչքը ջուր կտրի իր ճամփին: Հենց առաջին օրվանից երկինքը նոթոսվեց, ամպերը գարնանավարի հոխորտացին, կաթիլառատ անձրև շփշփաց մաքրեց բակ ու փողոցի մոտ, անհրապույր ձնակույտերը: «Մարտի իննիմ լազլազը բնին»՝ ավետաբերները եկան, ճամփան բացվեց, դրսիցները թևեցին ներս, արևը կամաց-կամաց ուժ առավ, հողն իր ամոթխած մերկությունը նրբանկատորեն թաքցրեց աչք շոյող մուգ կանաչի տակ, բակը վերածվեց սիրահար վարուժանների գեղգեղանքներով լեցուն բեմահարթակի: Սրանց թովիչ երգի ելևէջներն ընկան կիսաթուն բալենու ականջը: Միանգամից վեր թռավ, տարածեց ճյուղերը, ձգվեց, արևի սիրագորով համբույրից սիրտը ծխաց, վարդ պատռեց: Մի օր էլ Գրիշն արթնացավ, տեսավ՝ բալենին հարսնացած կանգնած. անմեղ, ոտքից ցզուլս ճերմակների մեջ, ռունգերին հազիվ հասնող եթերային բույրերով սիրահար մեղուների միալար բզզոցից արբած...

Գրիշը ծեզը ծեզին դուրս էր գալիս բակ՝ դրախտի տիրոջ կարգավիճակով՝ աչքը բալենու հարսնացած գեղեցկությանը, ականջը լիքը բզզոց-գեղգեղանք, սիրտը սպասումի տրոփների մեջ. «Էս տարին ուրիշ է, լավ է սկսվել, բերքի տարի է, լիություն կեղնի», - ինքնագոհ երջանակում էր Գրիշը:

Աչքն էլ չէր հասցրել թարթել՝ զարնանային ակնթարթային հրապույրները թռան, չքացան, ինչպես մանկությունն է թռչում ձեռքից՝ դեռ չկտացած, չլիազրած, չհասարակացած, չհարսնացած, չխաչված, չաչրած ու չաչրած: Ամիսն անցավ, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին: Ամիսն անցավ, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին: Ամիսն անցավ, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին:

ինչպես մանկությունն է թռչում ձեռքից՝ դեռ չկտացած, չլիազրած, չհարսնացած, չխաչված, չաչրած ու չաչրած: Ամիսն անցավ, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին: Ամիսն անցավ, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին: Ամիսն անցավ, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին:

Աչքը թարթեց, մեկ էլ տեսավ բալենին մայրացած: Շոյում է, ջրում, բնի մոտ հողը փխրեցնում, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին: Ամիսն անցավ, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին: Ամիսն անցավ, իսկ կրաքարով սպիտակեցրել էր դեռ վաղուց հարսնացած Գրիշին:

Գրիշը չէր հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ, չէր հասկանում, թե ինչու է նոր տեսնում այս գեղեցկությունը: Կյանք է ապրել, անցել, քանի՞-քանի՞ գարուն է դիմավորել ու ճանապարհել, ինչպես՞ է եղել, որ չի նկատել, չի հիացել, աչքը նայել է, բայց չի տեսել, ականջը լսել է, բայց սրտին չի հասել, և միայն հիմա՛ այս գարնանը, աներևույթ մի ձեռքով ետ է քաշվել վարագույրը, և նայում է ու տեսնում, լսում է ու ըմբռնում, հոտոտում է ու ըմբռնում ու չի կշտանում... չի կշտանում: Մի՞թե անցած գարունները չի ապրել, եկել, անհմաստ կողքո՞ւմ են անցել: Ես ինչքա՞ն բան է բաց թողել... ավստու... հազար ավստու: Աչքաթող արված անցած կյանքի բոլոր գարունների սերերը մի տեղ էին հավաքվել և ուշացած զարթոնքի զգայուն ապրումները մոլուցքի էին վերածվում: Այժմ նրան մի հայացքն անգամ բավական էր, որ բալենու եռաչափ պատկերը դաջվեր ուղեղում: Անգիր գիտեր, թե որ ճյուղից, որ տերևի հովանու տակից ինչպես են ժպտում իր

բալենու բալիկները: Եվ հիմա Սիրանը լեղի՞ ունի, թե իրեն խաբի, կամ ո՞վ կարող է խաբել Գրիշին:

Իսկ բալենու բալիկները օր օրին հյուսթեղանում են, ձգում ու մոտ են կանչում Սիրանին: Դե՛, մեծ կին է, սիրտը հասած բալ է ուզում. համ խոլեստերինն է իջնում, համ էլ արյան բաղադրությունն է բարելավվում, բայց թարսի պես գիժը նյարդերն է փչացնում և ամեն ինչ ջուրը զցում:


Մի օր էլ բարկացած Գրիշը Սիրանի ձեռքից բռնեց, բերեց կանգնեցրեց ծառի մոտ, խոժոռ աչքերը շուռ տվեց կնոջ վրա ու թնդած.

-Օր կսեմ՝ վիշնյա կուղես, ուրեմն կուղես, իլը աչե՞, չխոսիս... չխաբես...,- և ցույց տվեց ծառի տակ թափված բալի կորիզները: Ապացույցը փաստացի էր, անժխտելի: Սիրանը կարմրեց, լռեց, աչքերը լցվեցին... սուտը չէր փրկել:

Ամուսինների տոտալ կռվի ծայրն ընկավ թոռների ականջը: Դժվար բան չէր, այն շատ բացահայտ էր ու օրը օրին թեժացող:


Թոռները Գրիշի քթից թռած էին իր նման դեռ չտեսնող ու չլսող: Դրա համար էլ չլսեցին, չհասկացան պապի անհմաստ, անբացատրելի, ժամանակավրեպ վարմունքը: Ծիծաղեցին, պապի ժխտությունը դարձրին բերանի մաստակ. «Էլ կռնա՞ փակե ըղոնց լեն բերանները, կամ էլ թե ո՞ն բացատրե, թե ի՞նչ զգա ինքը...»: Դե՛, իսկ թոռների կենդանի վկայությամբ.

-Ընդորից հեղո Սիրան մամը վիշնեն կդերով կուլ կուղար, հըը՞:




# Նոր գրքեր

Նույն ՆԻԿՈՂՈՍԱՆ




Հրատարակվել է Արատ (Արթուր) Սարգսյանի «Հանդարտվիր, հոգիս» բանաստեղծությունների ժողովածուն, որը նաև յուրահատուկ երգարան է: Մարտադաշտում կոփված հայրենիքի պաշտպանը, թվում է, հեռու պետք է լիներ լիրիկայից, մինչդեռ նրա հոգին յուրատեսակ նվագարան է, որի մեղմ երաժշտության հասցեատերերը կարող են շատերը:




խութունների իրականացման ծախսերը:

Լույս է տեսել «ՀԱՆԳԻՊՈՒՄ» բանաստեղծությունների անթոլոգիան, որ ներառում է ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի անդամ տասը հեղինակների գործեր: Ժողովածուի տպագրական ծախսերը հոգացել է Լիտվիայում բնակվող մեր հայրենակից, գրող, ՀԳՄ անդամ Սոնյա Խաչատրյան-Ստրալեցկիենցն, որը ոչ միայն հեղինակել է 17 չափածո ու արձակ ժողովածուներ, այլև հոգացել է բազմաթիվ գրքերի տպագրական ու մանկական մրցանակաբաշխությունների իրականացման ծախսերը:



«Կան Արյան» հրատարակչությունը լույս է ընծայել Արտաշես Ատոմի «Ով եմ ես» բանաստեղծությունների առաջին հատորակը: Բանաստեղծության նախնական տարածքում հեղինակը իր գեղագիտական իդեալի փնտրտուքն ու սահմանումը տալիս է անկեղծ պոռթկումներով ու խոհափիլիսոփայությամբ: Գիրքը ինքնին նվիրում է, որի առանցքում սերն է առ կինը, մարդը, մայրն ու աշխարհը:



## ԱՆՈՒՄԻՆՆԵՐԻ ՕՐՈՐՆԵՐԻՆ

Անսովոր է գրքի վերնագրումը, ձևավորումը, անսովոր այն մանրակրկիտ աշխատանքը, որ հասցրել է կատարել երիտասարդ ու շատ սիրելի մի հայ մայր իր «Անուշ ձայնով կանչեմ օրոր» գրքում: Սկզբում թերահավատությունն է քեզ պատում. ինչ համեմատության եզր կարող են ունենալ հայուհին ու անգլուհին, սակայն ամեն մի տարակույս փարատվում է, երբ խորանում ես այս սիրուն ու բազմաշխատ գրքի էջերում, տեսնում մի ահռելի հետազոտական աշխատանք, որի առարկան, պարզվում է, կարծես թե նույնն է աշխարհի տարբեր մտածելակերպով այն յուրահատուկ էականների մոտ, որ կրում են մայր անունը: Գնահատելի է նախ և առաջ Հասմիկի հայացքի ուղղությունը՝ ժողովուրդը և նրա ամենախկնական ստեղծագործողն ու բանաստեղծը՝ մայրացած կին էակը: Հեղինակը լավատեղյակ է ուսումնասիրվող

հարցի տեսական ու գործնական/բանահյուսական նյութ/ բոլոր նրբերանգներին, օգտվում է հայ ու օտարերկրացի, հիմնականում անգլիացի բանագետների ու բանահավաքների մասնագիտական հարուստ շտեմարաններից և համապատասխան եզրույթների բացակայությունը հայերենում լրացնում է սեփական եզրաբանությամբ այնպիսի վարպետությամբ, որ անակնկալի ես գալիս: Աշխատանքը ծանրակշիռ ավանդ է բերում մանկական բանահյուսության այն բաժնին, որի հասցեատերը օրոցքահասակ մանկիկն է: Բնականաբար, այս պարագայում զխավոր դերակատարությունը մայրական հանկարծաստեղծ նախածեռնությանն է, և այդտեղ են ի մի գալիս աշխարհի բոլոր քնքշություններն ու կանացի հոգս ու խնդիրները:

Այդ խնդիրները քննարկվում են բացառիկ լայնությամբ ու խորությամբ, ինչպես ջրի մեջ նետված քարի հետզհետե լայնացող շրջանակները... Հայտնվում ես լեզվա-բանագիտության գիտակարգում, որտեղ բանավոր մշակույթը քննվում է լեզվական մշակույթի հայեցակետից՝ իր գործառնությամբ, կառուցվածքային, տարածաժամանակային առանձնահատկություններով: Ներկայացվում են հանգի ու ռիթմի խաղաղեցնող, քնեցնող գործառնություններն այդօրինակ տեսքերում: Յուրաքանչյուր դեպքում պատրաստ է երկլեզու օրինակը, միայն թե երբեմն անգլալեզու օրինակներում, հատկապես գրքի առաջին մասում, բացակայում են դրանց համապատասխան թարգմանական տեքստերը, մանավանդ որ գիրքը հասցեագրված է

ոչ միայն մասնագետներին, այլև ընթերցող լայն շրջանակներին: Գրքին հատուկ գրավչություն է տալիս հավելվածը՝ նորոյա բանասացների լուսանկարներով: Ընդգծվում է, որ գրքի ստեղծման գործում, ինչպես երևում է, իր շնորհակալ դերն է կատարել մեր համաքաղաքացի, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Ալվարո Ջիվանյանը: Միանում ենք նրա կարծիք-բարեմադրանքին, «որ աշխատանքը կունենա տեսական և կիրառական-գործնական կարևոր նշանակություն և իր ուրույն տեղը կզբաղեցնի ոլորտում գոյություն ունեցող հաջողված հետազոտությունների շարքում»:

Անահիտ ՀԱԿՈՒՅԱՆ  
Բ.գ.թ., դոցենտ

## ԿԱՊՈՒՅՏԻՑ ԱՌԱՋ, ԿԱՊՈՒՅՏԸ ԵՎ ՀԵՏՈՆ



### ՄԵՂԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Գույներ...գույներ...թվում է կարելի է անվանել հույզերի անուններով ու ծեփել նրանց պատերին: Ծխեցնել գույները ներսում ու դեմքիդ արտացույց էլ ծխի գույնը. տարանջատել երջանկությունը այն պահերից, երբ պարզապես թվում ենք երջանիկ, բախտավորությունը՝ բառի դիմաց «դժ» ժխտական նախածանց ավելացնելուց, իրական ժպիտն այն ժպիտից, որով ժպտում ենք բնագործին... Տեսնես ո՞վ է սահմանել երկնքի կապույտի աստիճանները:

Գարնանը՝ բաց կապույտ, ամռանը՝ վառ, աշնանը՝ մզացած, ծմռանն էլ՝ գորշ: Այնպես, ինչպես մարդիկ են կաղապարում երկինքը, կյանքն էլ կաղապարում է մարդկանց՝ արեգ մանկություն, բոցշունչ պատանեկություն, գինեվետ երիտասարդություն, գորովագուր ծերություն՝ զուտ կաղապարներ՝ կապույտի երանգի աստիճաններով, հարկ է ազատ ապրել... Ու սահմանած կաղապարները լցված են փոքր-ինչ սև պահերով, երբ ոչինչ չի ստացվում, հազիվ թե արժե դրանք դժբախտության արշիվով չափել: Ժլատության մարմնագույն պահերով, երբ չես ուզում քո ունեցածից բաժանվել, կարմիր պահերով, բարկանում ես բոլորի վրա: Ու այս ամենի շվաքի տակ՝ մի թփի մեջ, վախվորած, կիսահավատ, թաքնվում են կանաչ պահերը, երբ վերջապես թվում է՝ ամեն ինչ լավ է լինելու: Այս ամբողջը ներառում է կյանքի միայն մեկ շրջափուլ: Այս գույները նախապատրաստում են քեզ մոտալուտ ապագան ապրելուն: Հետո գալիս է կապույտը՝ խոշոր շրջադարձ. որպես գերակայություն ապրում է բոլորիս մեջ, հոսում երակներով,

լսվում սրտի զարկերում: Կապույտը երբեք միայնակ չի գալիս. գալիս է շքախմբով ու քանի որ փոքրիկ է հողն ընկած սերմի նվազ ծխի պես, նրան բերում են: Բերողը նա է, ուն



հոգին լաջվարդ է, անցյալը՝ լուրթ: Կապույտը բերում է փոփոխվող իրադարձությունների քամի, որից միշտ բարեւահոտ է գալիս: Կյանքը կապույտի շղարշով է պարուրում, աղջամուղջը նմանեցնում այն սրտահաճո միջօրեին, երբ անձրև էլ չի սպասվում: Երկինքը լցնում

է փետրավոր ամպերով. քեզ մնում է միայն թռչկոտել քաղցր բանբակի նմանվող ամպերի վրայով՝ պոկոտելով, կրծոտելով ու բերանիդ մեջ հալեցնելով արդարացված սպասումները:

Գալիս է մի պահ, երբ նա իր տեղը պիտի գիցի մյուս գույներին. ինչպես երազից պոկված մի դրվագ, տատի եփած թխվածքի բույր, հեծանիվից ընկնելուց մնացած ոտքի սպի կամ դրա մասին վերհուշ, կապույտը միշտ քեզ հետ է մնում, ապրում՝ քո մեջ, հոսում երակներով, լսվում սրտիդ զարկերում: Կապույտ, քեզնով է իմ վարդագույն երջանկությունը, մանուշակագույն կայունությունն ու ազնվամորագույն սերը: Կյանքիս ակնթարթները իրար ես միահյուսել ու մեկ ամբողջական ճշգրիտ գծապատկեր կազմել ժանյակի նման, վարդի իրար վրա դասավորվող թերթիկների պես: Ամեն բան ծիշտ է, ինչպես մեծից փոքր դասավորված մարգարտաշար ապարանջանը. մարգարիտներն իրենց մարմարե անհունում մեր աքսիոմայացած սիրո խոստովանություններն են պահում: Իմ լուսե կապույտ, իմ բարեկամ, երկնել ես իմ նոր եսը, ինձ՝ թերիս, դարձրել անըստգույտ: Քեզնից հետո էլ մոխրագույն չես: Ես անձրև եմ՝ սիրահարված ծիածանին, որ գետնին է փռել գույները նրա...

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ:  
 Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62  
 Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64  
 Խմբագրական խորհուրդ  
 Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլտրորադո Պրինտ» ՍՊԸ  
 Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը  
 Տպաքանակը՝ 500  
 Ծավալը՝ 1 տպագրական մանուկ